

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 176

Որդեգրութիւն – Թէպէտ որդեգրութիւնը տրամաբանականօրէն յաջորդում է վերածնութեան ու արդարացման՝ լինելով մօտիկից եւ անբաժանելիօրէն կապած դրանց, սակայն այդ իւրայատուկ (տարբեր) է դրանցից, փոխանցելով ընտրեալներին յաւելեալ եւ տարբեր առանձնաշնորհումներ: Վերածնութիւնը Աստուծոյ արարքն է որով հոգեւորապէս մեռածը հոգեւորապէս կենդանի է դառնում. եւ արդարացումը Աստուծոյ արարքն է որով փրկանաւորածը՝ այսինքն նա որ պատասխանում է հաւատքով ու ապաշխարութեամբ, օրինականօրէն ուղղարար է հռչակում Աստուծոյ առջեւ. իսկ որդեգրութիւնը Աստուծոյ շնորհալի արարքն է որով արդարացած անձը դառնում է Աստուծոյ որդին՝ Աստուծոյ ընտանիքի մի անդամ:

Ոչ վերածնութիւնը ոչ էլ արդարացումը հաղորդում են այսպիսի որդեգրելու մի սքանչելի խորհուրդ: Որդեգրութեան իմաստն է մտնել Աստուծոյ հետ մի մտերիմ ու սիրելի յարաբերութեան մէջ՝ որպէս Նրա զաւակները. այս մի չափազանց շնորհալի պարգէն է որն Աստուած շնորհել է մեզի, որովհետեւ Նա որեւէ պարտաւորութեան տակ չէր այդպէս անելու, եւ կարող էր վերածնել ու արդարացնել մեզի առանցի երբեւիցէ որդեգրելու մեզ որպէս Իր զաւակները (Մատթէոս 5:48, Յովհաննէս 1:12, Եփեսացիս 5:1, Փիլիպպեցիս 2:15, Եբրայեցիս 12:5-11, Ուէստմինստըրը Հաւատոյ Հանգանակ 12:1):

Ծագում է Աստուծոյ հրովարտակից – Ինչպէս Աստուծոյ բոլոր արարքները, որդեգրութեան ծագումն է Աստուծոյ յաւիտենական հրովարտակն՝ Նրա յաւիտենական որոշումը որ սիրելի ու փրկանաւորելու Իր ժողովրդին (Հռովմայեցիս 8:29, Եփեսացիս 1:3-6, Ա. Յովհաննէս 3:1):

Հիմնաւորած Քրիստոսի գործի վրայ – Ուէստմինստըրը Հաւատոյ Հանգանակը հռչակում է թէ բոլոր նրանք որոնք արդարացած են Քրիստոսում «Աստուած ընծայել է ... որպէսզի դարձնել որդեգրութեան շնորհքի մասնակիցներ»: Ընծայել նշանակում է շնորհել կամ նւիրել, մատնանշելով այն իրականութիւնը որ մենք արժանի չենք կամ չենք վաստակում այս որդեգրութիւնը, բայց թէ այդ Աստուծոյ մի շնորհալի պարգէն է: Արդարացման նման, մեր որդեգրութեան արժանաւոր հիմքը ամբողջութեամբ Քրիստոսի գործն է (Գաղատացիս 4:4-5):

Քրիստոսում – Թէկուզ Աստուած բոլորի Արարիչն ու Պահպանողն է, սակայն Նա բոլորի Փրկանաւորը չէ: Նա միմիայն նրանց Հայրն է որ Նա փրկել է Իր Որդու միջոցով, որոնք ուստի իրարու եղբայրներ ու քոյրեր են: Այս ներառում է հաւատացեալներին թէ Նոր եւ թէ Հին Կտակարանում (Հռովմայեցիս 9:7-8, Գաղատացիս 3:29, Եբրայեցիս 2:16, Ա. Պետրոս 3:5-6): Աստուածաշունչը դասակարգում է բոլոր մարդ արարածներին կամ որպէս Աստուծոյ զաւակներ կամ որպէս Մատանայի զաւակները (Յովհաննէս 8:42, 44, Եփեսացիս 2:1, 5:6, Ա. Յովհաննէս 3:10): Որդեգրութեան առանձնաշնորհումը վերապահած է միայն նրանց համար որոնք Քրիստոսում են (Մատթէոս 6:9). իսկ Աստուծոյ բարկութիւնը վերապահած է նրանց համար որոնք Քրիստոսում չեն (Յովհաննէս 3:36): Աստուծոյ ընդհանրական հայրութեան ու մարդու ընդհանրական եղբայրութեան գաղափարները հակասութեամբ չեն եւ պէտք է որ մերժեն, քանի որ դրանք նազեցնում են Քրիստոսի անձն ու գործը, ներկայացնելով Նրան որպէս միայն մի ընդօրինակելու բարոյական օրինակ, խափանելով աւետարանը, եւ այդպիսով տալով մարդկանց մի կեղծ վստահութիւն:

Ոչ բնական այլ գերբնական – Միայն Յիսուս Քրիստոսն է Աստուծոյ Որդին բնականօրէն (ի բնոյթ): Յիսուս Քրիստոսը Աստուծոյ եզակի Որդին է՝ Երրորդութեան երկրորդ անձը, վայելելով մի եզակի ու բացառիկ փոխարարութիւն Հայր Աստուծոյ հետ՝ Երրորդութեան առաջին անձը, բոլոր յաւիտենականութիւնից: Նոյնիսկ Սուրբ Հոգին՝ Երրորդութեան երրորդ անձը, չունի այս Հայր-Որդի փոխարարութիւնը: Մենք միւս ձեռքի վրայ, որոնք մի ժամանակ օտարական էինք՝ պատկանելով մի օտար ընտանիքին (Եփեսացիս 2:12), հիմա որդեգրել ենք Աստուծոյ ընտանիքի մէջ, ոչ բնականօրէն այլ գերբնականօրէն (Եփեսացիս 2:13, 19): Թէպէտ մենք ստացել ենք մեր որդիութիւնը ժամանակում, սակայն Քրիստոսի Որդիութիւնը յաւիտենական է. եւ թէպէտ մենք ժառանգակիցներ ենք Քրիստոսի հետ ու Նրա արժանիքով, սակայն մենք հաղորդակից չենք Քրիստոսի յաւիտենական ու եզակի Որդիութեանը մէջ: Յիսուս Քրիստոսը Հօրը միածինն է, որը տարբեր է որդեգրութիւնից:

Քրիստոսի համար – Բոլոր նրանք որոնք փրկուում են սիրոյ պարգէներ են որը Հայրը անցեալի յաւիտենականութեան մէջ որոշեց նւիրել Իր Որդուն, եւ Որդին անցեալի յաւիտենականութեան մէջ հաճեց ստանալ Հօրիցը (Յովհաննէս 17:6, Եբրայեցիս 2:10-13): Այս միայն մի գաղափար չէր որը Աստուած ուներ որի վերջնական իրականացումը կախեալ պիտի լինէր մարդու ազատ կամքից: Քրիստոսի կեանքն ու մահը մի հնարաւոր փրկանաւորութեան համար չէր, բայց մի իրական փրկանաւորութեան համար: Նա չգոհեց Իրեն հնարաւորապէս բոլորի համար. այլ, Նա մեռաւ իրականապէս յատուկ ու մասնաւոր ժողովրդի համար (Մատթէոս 1:21, Յովհաննէս 6:37, 39, 44, 17:9)՝ ըստ Աստուծոյ բացարձակ եւ անփոփոխ հրովարտակը: Ինչ հոյակապ առանձնաշնորհում է այս, որ Աստուած անցեալի յաւիտենականութեան մէջ հրովարտակել էր նւիրելու մեզ որպէս մի սիրոյ նւիրելու Իր Որդուն, եւ Որդին հաճեցել էր ընդունել այս եւ զոհել Ինքն Իրեն փրկանաւորելու մեզի, եւ ուստի մենք ընդունուած ենք Աստուծոյ ընտանիքի մէջ՝ ուր այժմ Նա է մեր Հայրը եւ մենք Նրա որդիները: